ԵԴ1/1560/01/25
(ՀԿԴ/0322/01/25)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՈՒՅԹԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

9 դեկտեմբերի 2025 թվական քաղաք Երևան

ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ Լիլիթ Թադևոսյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ Համլետ Ասատրյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի նախագահ Արթուր Դավթյանս, ուսումնասիրելով թիվ ԵԴ1/1560/01/25 (ՀԿԴ/0322/01/25) քրեական վարույթի ընդդատության հարցը լուծելու համար ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին Հակակոռուպցիոն դատարանի՝ 2025 թվականի նոյեմբերի 24-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի Ն Ք

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2025 թվականի մայիսի 6-ին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանում ստացվել է թիվ 62209623 (ԵԴ1/1560/01/25) քրեական վարույթը՝

- Արկադի Գեորգիի Համբարձումովի վերաբերյալ՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քրեական օրենսգիրք) 325-րդ

հոդվածի 1-ին մասով, 38-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 38-190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով,

- Գառնիկ Սահակի Մովսիսյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով, 38-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 38-190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով,

- Սլավիկ Սմբատի Սարգսյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով, 38-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 38-190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով,

- Վարդան Չեչանի Միրզոյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով, 38-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 38-190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով,

- Կարեն Լյովայի Երեմյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 38-190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով,

- Կարեն Լևոնի Մկրտչյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 38-190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով,

- Ներսես Սահակի Հարությունյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով,

- Սուրեն Լևոնի Երեմյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 38-190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

1.1. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը (դատավոր Գ.Պողոսյան) 2025 թվականի մայիսի 12-ին որոշում է կայացրել թիվ ԵԴ1/1560/01/25 քրեական վարույթը ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը, 2025 թվականի նոյեմբերի 3-ին՝ նախնական դատալսումների ընթացքում, որոշում է կայացրել թիվ ԵԴ1/1560/01/25 քրեական վարույթն ըստ առարկայական ընդդատության Հակակոռուպցիոն դատարան փոխանցելու մասին:

3. Հակակոռուպցիոն դատարանը (դատավոր Ս.Դաղոյան) 2025 թվականի նոյեմբերի 24-ին որոշում է կայացրել թիվ ՀԿԴ/0322/01/25 (ԵԴ1/1560/01/25) քրեական

վարույթը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին՝ ընդդատության հարցը լուծելու համար:

4. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2025 թվականի դեկտեմբերի 1-ին:

<u>Ընդդատության հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

5. Արկադի Համբարձումովի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով, 38-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 38-190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով հանրային քրեական հետապնդում է հարուցվել հանրորեն վտանգավոր այն արարքների համար, որ *«(…) [Ն]ա ակնհայտ կեղծ փաստաթղթի օգտագործմամբ օժանդակել է Ա.Ե.-ի, Գ.Ս-ի, Ներսես Հարությունյանի և Ա.Մ.-ի կողմից խմբի կազմում, նախնական համաձայնությամբ, խաբեության եղանակով Երևան քաղաքին պատկանող, առանձնապես խոշոր չափերով, շուրջ՝ 213.800.000 ՀՀ դրամ շուկայական արժեքով գույքի հափշտակությանը և Ա.Ե.-ի, Ներսես Հարությունյանի և Ա.Մ.-ի կողմից հանցավոր ճանապարհով ստացված առանձնապես խոշոր չափերով անշարժ գույքն օրինականացնելուն:*

Այսպես.

2013 թվականի հունվարին Ա.Լ.Ե.-ն իր մտերիմ, փաստաբանական գործունեություն իրականացնող Ներսես Սահակի Հարությունյանի, Գ.Ս.Ս.-ի և Ա.Վ.Մ.-ի հետ նախնական համաձայնություն է ձեռք բերել խաբեության եղանակով, Երևան քաղաքին պատկանող, առանձնապես խոշոր չափերով, շուրջ՝ 213.800.000 ՀՀ դրամ շուկայական արժեքով գույքը հափշտակելու հարցում:

Հիշյալ մտադրությունն իրականացնելու համար վերջիններս օգտագործելու նպատակով ձեռք են բերել քննությամբ չպարզված հանգամանքներում պատրաստված իրավաբանական նշանակություն ունեցող փաստեր հաստատող բովանդակությամբ ամբողջովին կեղծ փաստաթղթեր, մասնավորապես.

- Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի պետական արխիվից իբրև 10.02.2000 թվականի թիվ 02-21/39 գրությամբ տրված՝ Հայկական ՍՍՀ Երևանի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի՝ 1986 թվականի մայիսի 19-ին կայացած

նիստի թիվ 7/85 արձանագրության քաղվածքի պատճենն այն մասին, որ իբրև Երևանի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի՝ 1986 թվականի մայիսի 19-ի որոշմամբ 26 հոգու, այդ թվում՝ Վ.Ա-ին հատկացվել է ընդհանուր 2.61հա հողատարածք, յուրաքանչյուրին՝ 0.1 հա մակերեսով՝ բնակարան կառուցելու համար,

- «Համաձայնություն» վերտառությամբ, միայն Վ.Ա.-ի ստորագրությամբ, ձեռագիր գրառմամբ, 10.06.1991 թվականի ամսաթվով կազմված թղթի պատճենը, որի համաձայն՝ իբրև գործկոմի որոշումով հողակտոր ստացած բնակիչները տվել են իրենց համաձայնությունն առ այն, որ Լ.Գ.-ն վաճառի իրենց հատկացված հողը Վ.Ք.Ա-ին, իսկ Վ.Ա.-ն պարտավորվել է վաճառելուց հետո ստացած գումարը բաժանել վերը նշված անձանց միջև,

*- «Առուվաճառք» վերտառությամբ միայն Վ.Ա.-ի ստորագրությամբ, 07.05.1990 թվականի ամսաթվով, ձեռագիր գրառմամբ կազմված թղթի պատճեն, որի համաձայն՝ իբրև Վ.Ա.-ն ***** *** ******* ***** տարածքում գտնվող 2.61 հա մակերեսով տարածքը 10.000 ռուբլիով վաճառել է Գառնիկ Մովսիսյանին, Արկադի Համբարձումովին, Վարդան Միրզոյանին և Սլավիկ Սարգսյանին:*

Վերոգրյալ փաստաթղթերը կազմվել են այն պայմաններում, որ Երևանի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեն Վ.Ա.-ին և մյուսներին ընդհանուր 2.61 հա հողամաս չի հատկացրել և կեղծ փաստաթուղթ կազմելու օրվա դրությամբ շարունակել է գտնվել Երևան համայնքի օրինական տիրապետման ներքո:

Վերոհիշյալ կեղծ փաստաթղթերի հիման վրա հողամասն անշարժ գույքի կադաստրի կոմիտեում գրանցելու և տնօրինելու հնարավորություն ստանալու նպատակով Ա.Ե.-ի, Գ.Ս.-ի, Ներսես Հարությունյանի և Ա.Մ.-ի միջև ձեռք բերված պայմանավորվածության համաձայն՝ 2013 թվականի հունվարի 29-ին Ա.Ե.-ի մորաքրոջ ամուսինը՝ Արկադի Համբարձումովը, Գ.Ս.-ի հայրը՝ Սլավիկ Սարգսյանը, Ներսես Հարությունյանի կնոջ հայրը՝ Գառնիկ Մովսիսյանը և Ա.Մ.-ի հայրը՝ Վարդան Միրզոյանը, հիշյալ ակնհայտ կեղծ փաստաթղթերի օգտագործմամբ իրենց անունից լիազորված անձ Ն.Ս.-ի միջոցով դիմում են ներկայացրել Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ խնդրելով հաստատել իրավաբանական նշանակություն ունեցող այն

*փաստը, որ դիմումատուներ Վարդան Միրզոյանը, Գառնիկ Մովսիսյանը, Սլավիկ Սարգսյանը և Արկադի Համբարձումովը հանդիսանում են ***** ****** ***** *** ****** ***** տարածքում գտնվող, 2.61 հա մակերեսով տարածքի սեփականատերեր՝ այդ կերպ միջոցներ տրամադրելու եղանակով օժանդակելով Ա.Ե.-ի, Ներսես Սահակի Հարությունյանի, Գ.Ս.Ս.-ի և Ա.Վ.Մ.-ի կողմից նախնական համաձայնությամբ խարդախությամբ առանձնապես խոշոր չափերով Երևան համայնքին պատկանող գույքի հափշտակությանը:*

*Դատական գործին շնորհվել է թիվ ***/****/**/** համարը, որը 2013 թվականի հունվարի 29-ին վարույթ է ընդունվել դատավոր Ա.Մ.-ի կողմից: Քննության առնելով թիվ ***/****/**/** քաղաքացիական գործը՝ դատավոր Ա.Մ.-ն 2013 թվականի փետրվարի 11-ի վճռով Վարդան Միրզոյանի, Գառնիկ Մովսիսյանի, Սլավիկ Սարգսյանի և Արկադի Համբարձումովի դիմումը բավարարել է և հաստատել իրավաբանական նշանակություն ունեցող այն փաստը, որ դիմումատուներ Վարդան Միրզոյանը, Գառնիկ Մովսիսյանը, Սլավիկ Սարգսյանը և Արկադի Համբարձումովը սեփականության իրավունքով տիրապետում են ***** ****** ***** *** ***** ***** տարածքում գտնվող, 2.61 հա մակերեսով հողամասը և հանդիսանում են սեփականատերեր:*

*Այնուհետև, Երևանի քաղաքապետարան ներկայացված դիմումների հիման վրա Երևանի քաղաքապետի՝ 2013 թվականի ապրիլի 8-ի և 17-ի որոշումներով Արկադի Համբարձումովի, Վարդան Միզոյանի, Գառնիկ Մովսիսյանի և Սլավիկ Սարգսյանի անվամբ գրանցված, ***** **** ****** ***** տարածքում գտնվող 2.61 հա (1.1 հա+1.51 հա) մակերեսով հողամասերին տրամադրվել են հացեներ, համապատասխանաբար՝ ***** *** ***** **** (*.* հա) և ***** *** ***** ***/* (*.** հա): 2013 թվականի հունիսին համապատասխան դիմումներով վերոհիշյալ փաստաթղթերը ներկայացվել են ՀՀ կադաստրի կոմիտե, որի հիման վրա 2013 թվականի հունիսի 28-ին *.*****, ***-****, **** **** ***** ***/* հացեում գտնվող, 1.51 հա մակերեսով և *.*****, ***-****, ***** ***** ***** *** հացեում գտնվող 1.1 հա մակերեսով հողամասերը կեղծ փաստաթղթերի միջոցով ձևականորեն ձևակերպվել են Արկադի Համբարձումովի, Սլավիկ Սարգսյանի, Գառնիկ Մովսիսյանի և Վարդան Միրզոյանի անվամբ, սակայն փաստացի պատկանել են Ա.Ե.-ն, Ներսես*

Հարությունյանին, Գ.Ս.-ին և Ա.Մ.-ին՝ այդ կերպ վերջիններս Արկադի Համբարձումովի, Սլավիկ Սարգսյանի, Գառնիկ Մովսիսյանի և Վարդան Միրզոյանի օժանդակությամբ ակնհայտ կեղծ փաստաթղթերի օգտագործմամբ խմբի կազմում նախնական համաձայնությամբ հափշտակել են Երևան համայնքին պատկանող առանձնապես խոշոր չափերով՝ 213.800.000 ՀՀ դրամ արժողությամբ գույքը՝ միաժամանակ թաքցնելով հիշյալ գույքի իրական պատկանելիությունը:

*Դրանից հետո, Ա.Ե.-ն 2013 թվականի սեպտեմբերի 25-ին անձամբ դիմումներ է ներկայացրել ՀՀ կադաստրի կոմիտե և ստացել միասնական տեղեկանք՝ *.*****, ***** **** **** և *.*****, ***** **** ***/* հասցեներում գտնվող անշարժ գույքերի սեփականատերերի վերաբերյալ:*

*Այնուհետև, ակնհայտ հանցավոր ճանապարհով ստացված, Երևան համայնքին պատկանող և երբևէ չօտարված հիշյալ գույքերի ծագման աղբյուրը, տնօրինման եղանակը, իրավունքները, պատկանելիությունը թաքցնելու և խեղաթյուրելու նպատակով, ինչպես նաև հանցավոր հետքերը վերացնելու համար մի շարք ձևական պայմանագրեր կնքելու, այդ կերպ՝ օրինական ճանապարհով գույքի ձեռքբերման պատրանք ստեղծելու եղանակով Ա.Ե.-ն, Ա.Մ.-ն և Ներսես Հարությունյանը Վարդան Միրզոյանի, Գառնիկ Մովսիսյանի, Սլավիկ Սարգսյանի և Արկադի Համբարձումովի օժանդակությամբ օրինականացրել են հափշտակության առարկա հանդիսացած՝ ***** ******, ***** *** փողոցում գտնվող, ընդհանուր 2.61 հա մակերեսով հողամասի՝ Արկադի Համբարձումովի անվամբ ձևականորեն գրանցված, սակայն փաստացի Ա.Ե.-ին պատկանող՝ 1,75 հա մակերեսով, Գ.Ս.-ի հոր՝ Սլավիկ Սարգսյանի անվամբ ձևականերեն գրանցված, սակայն փաստացի Ա.Ե.-ին պատկանող՝ 0.28 և 0.02 հա մակերեսներով, Վարդան Միրզոյանի անվամբ ձևականորեն գրանցված, սակայն փաստացի Ա.Մ.-ին պատկանող՝ 0.41 հա մակերեսով, Գառնիկ Մովսիսյանի անվամբ ձևականորեն գրանցված, սակայն փաստացի Ներսես Հարությունյանին պատկանող՝ 0.09 հա մակերեսով մասնաբաժինները:*

*Մասնավորապես՝ 2013 թվականի հոկտեմբերի 3-ին Վարդան Միրզոյանի, Գառնիկ Մովսիսյանի, Սլավիկ Սարգսյանի և Արկադի Համբարձումովի միջև կնքված անշարժ գույքի բաժանման պայմանագրի ուժով *.*****, **** **** **** հասցեում գտնվող 1,1 հա մակերեսով հողամասը բաժանվել է մասերի, որից՝ Վարդան*

Միրզոյանին փոխանցվել է 0,219495 հա, Գառնիկ Մովսիսյանին՝ 0,094696 հա, Արկադի Համբարձումովին՝ 0,442397 հա, իսկ Սլավիկ Սարգսյանին՝ 0,28332 և 0,020291 հա:

*Վերը նշված չորս անձանց միջև նույն օրը կնքված անշարժ գույքի բաժանման պայմանագրի ուժով՝ *.*****, ****** **** ***/* հասցեում գտնվող 1,51 հա մակերեսով հողամասը բաժանվել է 2 մասի, որից 0,2 հա մակերեսով հողամասը որպես սեփականություն անցել է Վարդան Միրզոյանին, իսկ 1,309862 հա մակերեսով հողամասը՝ Գառնիկ Մովսիսյանին, Սլավիկ Սարգսյանին և Արկադի Համբարձումովին, որից հետո 25.04.2015 թվականին Գառնիկ Մովսիսյանի, Սլավիկ Սարգսյանի և Արկադի Համբարձումովի միջև կնքված անշարժ գույքի բաժինների առուվաճառքի ձևական պայմանագրի ուժով՝ իբրև Արկադի Համբարձումովը 10.000.000 ՀՀ դրամ գումարով գնել է Գառնիկ Մովսիսյանի և Սլավիկ Սարգսյանի 1/3-րդ ական բաժինները: Գործարքի արդյունքում 2015 թվականի մայիսի 6-ին *.*****, ***** *** ******* գտնվող շուրջ 1,31 հա մակերեսով հողամասը, որին տրվել է *.*****, *** **** **** **** **** ***/* հասցեն, գրանցվել է Արկադի Համբարձումովի անվամբ, իսկ 0,28 և 0,02 հա մակերեսով հողատարածքները՝ Սլավիկ Սարգսյանի անվամբ, սակայն դրանց փաստացի սեփականատեր է հանդիսացել Ա.Ե.-ն:*

Այսինքն՝ խոշոր չափի հողամասերի տրոհման միջոցով՝ բաժանման և առուվաճառքի վերաբերյալ ձևական պայմանագրերի կնքման արդյունքում, Ա.Ե.-ն, Ներսես Հարությունյանը և Ա.Մ.-ն՝ Արկադի Համբարձումովի, Վարդան Միրզոյանի, Գառնիկ Մովսիսյանի, Սլավիկ Սարգսյանի օժանդակությամբ խեղաթյուրել են Երևան համայնքին պատկանող, երբևէ որևէ անձի չօտարված և չհատկացված հիշյալ գույքի ծագման աղբյուրը, թաքցրել հանցավոր հետքերը և հափշտակության ավարտից կարճ ժամանակ անց Արկադի Համբարձումովի անվամբ արդեն իսկ ձևական գրանցված է եղել ընդհանուր 1,752397 հա, Սլավիկ Սարգսյանի անվամբ՝ 0,28 և 0,02 հա մակերեսով հողամասեր, որոնք ամբողջությամբ տնօրինվել են Ա.Ե.-ի կողմից, Վարդան Միրզոյանի անվամբ գրանցված է եղել 0.41 հա մակերեսով հողատարածք, որը տնօրինվել է Ա.Մ.-ի կողմից, իսկ Գառնիկ Մովսիսյանի անվամբ գրանցված է եղել 0.09 հա մակերեսով հողատարածք, որը տնօրինվել է Ներսես Հարությունյանի կողմից:

*Հանցավոր ծագում ունեցող գույքի փնօրինման արդյունքում 2015 թվականի նոյեմբերի 26-ին կնքված անշարժ գույքի գրավի թիվ **** պայմանագրով Ա.Ե.-ն **** *** ***/* հասցեում գտնվող, 1,31 հա մակերեսով, կողմերի համաձայնությամբ 108.360.000 ՀՀ դրամ արժեքով, հողամասը գրավադրել է «Պրոկրեդիտ» բանկում՝ որպես նրան պատկանող «*** * *****» ՍՊ ընկերությանը տրամադրված վարկի գույքային ապահովագրություն, այնուհետև՝ 2019-2020 թվականների ընթացքում հողամասերը բաժանել է փոքր չափերի, շարունակել այդ եղանակով քողարկել և խեղաթյուրել գույքի հանցավոր ծագումը և փաստացի իրեն պատկանող, սակայն Արկադի Համբարձումովի անվամբ գրանցված հողամասերը վաճառել տարբեր անձանց:*

*Մասնավորապես, Սլավիկ Սարգսյանի անվամբ գրանցված 0,28 հա մակերեսով հողատարածքը բաժանվել է տարբեր մասերի և 17.10.2013թ. դրա մի մասը վաճառվել է Ն.Խ.-ին, իսկ մյուս մասը՝ 10.04.2014թ.-ին՝ Ա.Գ.-ին: 18.10.2019 թվականին **** *** ***/** հասցեում գտնվող 0,4 հա մակերեսով հողատարածքը 20.300.000 ՀՀ դրամով վաճառել է Ս.Մ.-ին, ***** *** ***/* հասցեում գտնվող շուրջ 0,44 հա մակերեսով հողատարածքը 12.12.2019 թվականին 30.500.000 ՀՀ դրամով վաճառել է Մ.Մ.-ին, 13.03.2020 թվականին կնքված առուվաճառքի երեք պայմանագրերով ***** *** ***/**, **** *** ***/**, ***** *** ***/** հասցեներում գտնվող համապատասխանաբար՝ 0.3, 0,3 և 0,31 հա մակերեսներ ունեցող հողամասերը ընդհանուր 96.000.000 ՀՀ դրամով վաճառել է Ա.Օ.-ին:*

Հանցավոր ծագում ունեցող գույքի փնօրինման արդյունքում 2017թ. օգոստոսի 14-ին Ա.Մ.-ն Վարդան Միրզոյանի անվամբ գրանցված, սակայն փաստացի իրեն պատկանող 0.2 հա մակերեսով հողատարածքը բաժանել է տարբեր մասերի, որից 0.0309 հա մակերեսով հողատարածքը 28.000.000 ՀՀ դրամով վաճառել է Ա.Հ.-ին, իսկ 0.041 հա մակերեսով հողատարածքը 2.800.000 ՀՀ դրամով 27.05.2019թ. վաճառել է Ա.Մ.-ին, 20.05.2019թ.-ին 0,041 հա մակերեսով հողատարածքը վաճառել է Ա.Ջ.-ին՝ 2.800.000 ՀՀ դրամով, 0.0461 հա մակերեսով հողատարածքը 20.05.2019թ. վաճառել է Ա.Ն.-ին՝ 3.000.000 ՀՀ դրամ արժեքով, 0.041 հա մակերեսով հողատարածքը 04.04.2019թ. վաճառել է Հ.Պ.-ին՝ 3.000.000 ՀՀ դրամ արժեքով:

Հանցավոր ծագում ունեցող գույքի փնօրինման արդյունքում Ներսես Հարությունյանը Գառնիկ Մովսիսյանի անվամբ գրանցված, սակայն փաստացի իրեն պատկանող 0.09 հա մակերեսով գույքն օտարել է 2013 թվականին՝ 32.000 ԱՄՆ դոլարով:

Վերը նկարագրված դիտավորյալ գործողությունների հետևանքով Ա.Ե-ն, Գ.Ս.-ն, Ներսես Հարությունյանը և Ա.Մ.-ն խմբի կազմում, նախնական համաձայնությամբ, ակնհայտ կեղծ փաստաթղթի օգտագործմամբ, Վարդան Միրզոյանի, Գառնիկ Մովսիսյանի, Սլավիկ Սարգսյանի և Արկադի Համբարձումովի օժանդակությամբ հափշտակել են առանձնապես խոշոր չափերի՝ շուրջ 213.800.000 ՀՀ դրամ արժեքով հողամասը, ապա Ա.Ե.ն, Ներսես Հարությունյանի և Ա.Մ.-ն՝ Վարդան Միրզոյանի, Գառնիկ Մովսիսյանի, Սլավիկ Սարգսյանի և Արկադի Համբարձումովի օժանդակությամբ թաքցրել են հափշտակության առարկա հանդիսացած հիշյալ հողամասի իրենց մասնաբաժնի իրական պատկանելիությունը, դրանով խեղաթյուրել դրա հանցավոր ծագումը, փնօրինել ակնհայտ հանցավոր ծագում ունեցող գույքը, ինչի արդյունքում օրինականացրել են հանցավոր ճանապարհով ստացված, առանձնապես խոշոր չափերով, ընդհանուր՝ 213.800.000 ՀՀ դրամ արժեքով հողամասերը: (…)»[1]:

5.1. Նույնանման փաստական հանգամանքներով ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով, 38-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 38-190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով հանրային քրեական հետապնդում է հարուցվել նաև Գառնիկ Մովսիսյանի, Սլավիկ Սարգսյանի և Վարդան Միրզոյանի նկատմամբ[2]:

5.2. Կարեն Երեմյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 38-190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով հանրային քրեական հետապնդում է հարուցվել հանրորեն վտանգավոր այն արարքների համար, որ *«(…) [Ն]ա օժանդակել է Ա.Ե.-ին, օրինականացնել հանցավոր ճանապարհով ստացված առանձնապես խոշոր չափերով՝ 110.000.000 ՀՀ դրամ արժողությամբ անշարժ գույքը:*

Այսպես.

---

[1] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 6, թերթեր 184-189:
[2] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 6, թերթեր 162-167, 178-183, 190-195:

Ա.Ե.-ն տևական ժամանակ ճանաչել և տարբեր հարցերով շփումներ է ունեցել 01.01.2008 թվականից մինչև 07.10.2011 թվականը Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավորի օգնականի պաշտոն զբաղեցնող և դատավոր Ա.Մ.-ին կցված Գ.Ս.Ս.-ի հետ:

2012 թվականի օգոստոսի սկզբին Ա.Ե.-ն և Գ.Ս.-ն նախնական համաձայնություն են ձեռք բերել խաբեության եղանակով, Երևան քաղաքին պատկանող, առանձնապես խոշոր չափերով, շուրջ՝ 110.000.000 ՀՀ դրամ շուկայական արժեքով գույք հափշտակելու հարցում: Հիշյալ մտադրությունն իրականացնելու համար վերջիններս օգտագործելու նպատակով նախնական համաձայնությամբ ձեռք են բերել քննությամբ չպարզված հանգամանքներում պատրաստված իրավաբանական նշանակություն ունեցող փաստեր հաստատող բովանդակությամբ ամբողջովին կեղծ փաստաթղթեր, մասնավորապես.

*- Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի պետական արխիվից իբրև 10.02.2000 թվականի թիվ 02-20/37 գրությամբ տրված՝ Հայկական ՍՍՀ Երևանի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի՝ 1990 թվականի հոկտեմբերի 8-ին կայացած նիստի թիվ 24/32 արձանագրության քաղվածքի պատճենն այն մասին, որ իբրև Երևանի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի՝ 1990 թվականի հոկտեմբերի 8-ի որոշմամբ հասարակական սննդի օբյեկտ կառուցելու համար «****» կոոպերատիվին, հանձինս՝ նախագահ Թ.Գ.-ի, **** ***** *_** ********** հատկացվել է 0,75 հա մակերեսով հողատարածք,*

*- 05.10.1998 թվականի ամսաթվով կազմված առուվաճառքի պայմանագրի պատճենն այն մասին, որ իբրև նշված օրը Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանում կնքված պայմանագրով Թ.Գ.-ն **** ****** *_** ********* */* և */* շենքերի դիմացի հատվածում գտնվող, 0,75 հա մակերեսով հիշյալ տարածքը 4.000.000 ՀՀ դրամով վաճառել է Ա.Ե.-ի վարորդ Ա.Հ.Հ.-ին:*

Նշված փաստաթղթերը կազմվել են այն պայմաններում, որ Երևանի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեն Թ.Գ.-ին որևէ հողատարածք չի հատկացրել և այն կեղծ փաստաթուղթ կազմելու օրվա դրությամբ շարունակել է գտնվել Երևան համայնքի օրինական տիրապետման ներքո:

Վերոհիշյալ կեղծ փաստաթղթերի հիման վրա հողամասն անշարժ գույքի կադաստրի կոմիտեում գրանցելու և տնօրինելու հնարավորություն ստանալու նպատակով Ա.Ե.-ի և Գ.Ս.-ի միջև ձեռք բերված պայմանավորվածության համաձայն՝ 2012 թվականի օգոստոսի 9-ին Ա.Ե.-ի վարորդ Ա.Հ.-ը հիշյալ ակնհայտ կեղծ փաստաթղթերի օգտագործմամբ իր անվամբ իրավաբանական նշանակություն ունեցող փաստի հաստատման պահանջի մասին դիմում է ներկայացրել Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ այդ կերպ միջոցներ ստեղծելու եղանակով օժանդակելով Ա.Ե.-ի և Գ.Ս.-ի կողմից նախնական համաձայնությամբ խարդախությամբ առանձնապես խոշոր չափերով Երևան համայնքին պատկանող գույքի հափշտակությանը:

*Դատական գործին շնորհվել է թիվ ***/****/**/** համարը, որը 2012 թվականի օգոստոսի 10-ին վարույթ է ընդունել նույն դատարանի դատավոր Ա.Մ.-ն: Քննության առնելով թիվ ***/****/**/** քաղաքացիական գործը՝ դատավոր Ա.Մ.-ն 2012 թվականի սեպտեմբերի 3-ին վճռել է Ա.Հ.Հ.-ի դիմումը բավարարել և հաստատել իրավաբանական նշանակություն ունեցող փաստն այն մասին, որ Ա.Հ.Հ.-ը հանդիսանում է ***** ****** **** ***** *_** ********* */* և */* շենքերի դիմացի հարող տարածքի՝ 0,75 հա մակերեսով հողամասի սեփականատերը:*

*Այնուհետև, Երևանի քաղաքապետարան ներկայացված դիմումի հիման վրա Երևանի քաղաքապետի՝ 2012 թվականի հոկտեմբերի 8-ի որոշմամբ հիշյալ հողամասին տրվել է առանձին հասցե, այն է՝ *.*****, ****_***** ******, *_** ********* */*: Դրանից հետո՝ 2012 թվականի հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին, համապատասխան դիմումներով վերոհիշյալ, ինչպես նաև հողամասի սահմանների ճշգրտման վերաբերյալ մի շարք փաստաթղթեր Ա.Հ.-ի կողմից ներկայացվել են ՀՀ կադաստրի կոմիտե, որի արդյունքում 2012 թվականի դեկտեմբերի 11-ին *.*****, ****-***** ******, *_** ******* */* հասցեում գտնվող, 0.74 հա մակերեսով հողամասը կեղծ փաստաթղթերի միջոցով ձևականորեն ձևակերպվել է Ա.Հ.-ի անվամբ, սակայն փաստացի պատկանել է Ա.Ե.-ին և Գ.Ս.-ին՝ այդ կերպ վերջիններս Ա.Հ.-ի օժանդակությամբ ակնհայտ կեղծ փաստաթղթերի օգտագործմամբ խմբի կազմում*

նախնական համաձայնությամբ հափշտակել են Երևան համայնքին պատկանող առանձնապես խոշոր չափերով՝ 110.000.000 ՀՀ դրամ արժողությամբ գույքը:

*Այնուհետև, Ա.Ե.-ն Ա.Հ.-ի, Սուրեն և Կարեն Երեմյանների, Բ.Ա.-ի, իսկ Գ.Ս.-ն՝ Կարեն Մկրտչյանի օժանդակությամբ հանցավոր ճանապարհով ստացված, Երևան համայնքին պատկանող և երբևէ չօտարված հիշյալ գույքի՝ յուրաքանչյուրն իրեն հասանելիք բաժնեմասի ծագման աղբյուրը, տնօրինման եղանակը, պատկանելիությունը, իրավունքները թաքցնելու և խեղաթյուրելու, ինչպես նաև հանցավոր հետքերը վերացնելու նպատակով մի շարք ձևական պայմանագրեր կնքելու, այդ կերպ՝ օրինական ճանապարհով գույքի ձեռքբերման պատրանք ստեղծելու եղանակով, ինչպես նաև հանցավոր ծագում ունեցող գույքի տնօրինմամբ օրինականացրել են հափշտակության առարկա հանդիսացած՝ ***** ****** ****_***** ********, *_** ********, */* հասցեում գտնվող հողամասը (Ա.Ե.-ն՝ 0.33 հա և 0.34 հա մակերեսով, Գ.Ս.-ն՝ 700 քմ մակերեսով մասնաբաժինները):*

Մասնավորապես՝ Ա.Հ.-ի մասնակցությամբ 2013 թվականի հունվարի 8-ին կնքված անշարժ գույքի նվիրատվության ձևական պայմանագրով հափշտակության առարկա հանդիսացած հողամասի իրական պատկանելիությունը թաքցնելու նպատակով այն նախ գրանցվել է Ա.Ե.-ի եղբոր՝ Սուրեն Երեմյանի, Գեղամ Սարգսյանի ընկերոջ՝ Կարեն Մկրտչյանի և Երևան համայնքի Ավան վարչական շրջանի նախկին ղեկավար Մ.Ջ.-ի վարորդ Բ.Ա.-ի անվամբ, որից հետո՝ 2013 թվականի հունվարի 17-ին, հիշյալ անձանց միջև կնքված հողաբաժանման պայմանագրով Ա.Ե.-ն հափշտակության առարկա հանդիսացած հողամասի իր՝ 0.33 հա մակերեսով մասնաբաժինը գրանցել է եղբոր՝ Սուրեն Երեմյանի անվամբ, իսկ Գ.Ս.-ը խարդախության առարկա հանդիսացող իր՝ 700 քմ մակերեսով Կարեն Մկրտչյանի անվամբ ձևականորեն գրանցված մասնաբաժինը 2013 թվականին կնքված նվիրատվության պայմանագրով գրանցել է իր անվամբ, որից հետո 12.000 ԱՄՆ դոլարի դիմաց գրավադրել բանկում:

2013 և 2015 թվականներին, Ա.Ե.-ի, Սուրեն Երեմյանի, նրանց ազգական Կարեն Երեմյանի և Երևան քաղաքի բնակիչ Ա.Պ.-ի միջև կնքվել են առուվաճառքի վերաբերյալ ձևական պայմանագրեր, մասնավորապես՝ 2013 թվականի նոյեմբերի 7-ին Սուրեն Երեմյանի և Ա.Պ.-ի միջև կնքված հողամասի առուվաճառքի

պայմանագրով Ա.Պ.-ն Սուրեն Երեմյանից իբրև 12.000.000 ՀՀ դրամով գնել է 0.33 հա մակերեսով հողամասը, սակայն երկու տարի անց՝ 2015 թվականի դեկտեմբերի 15-ին, հիշյալ հողամասի շուկայական արժեքի նախկինից ակնհայտ բարձր լինելու պայմաններում, Ա.Պ.-ն իր կողմից ձեռք բերված արժեքից 5.000.000 ՀՀ դրամ պակաս գնով՝ 7.000.000 ՀՀ դրամով, կրկին ձևական առուվաճառքի պայմանագրով վաճառել է Ա., Սուրեն և Կարեն Երեմյաններին:

*Այնուհետև արդեն իսկ իր և եղբայրների անվամբ գրանցված, 76.020.000 ՀՀ դրամ արժեք ունեցող հիշյալ հողամասը 2016 թվականի ապրիլի 6-ին կնքված անշարժ գույքի գրավի թիվ 57096 պայմանագրով Ա.Ե.-ի կողմից գրավադրել է «ՊրոԿրեդիտ Բանկ» ՓԲ ընկերությունում, որի հիման վրա Ա.Ե.-ին փաստացի պատկանող «*** * ******» ՍՊ ընկերությանը բանկի կողմից տրամադրվել են վարկային միջոցներ:*

Հետագայում հիշյալ հանցավոր ծագում ունեցող գույքը՝ հողամասը, նորից բաժանվել է եղբայրների միջև, որից 0,1 հա մակերեսով հողակտորը գրանցվել է Ա.Ե.ի, իսկ 0,23 հա մակերեսով հողամասը՝ Սուրեն և Կարեն Երեմյանների անվամբ:

*Երևանի քաղաքապետի՝ 27.06.2016թ թիվ Ն-2343-Ա որոշմամբ Երևանի ավագանին տվել է իր համաձայնությունը՝ փաստացի Ա.Ե.-ին պատկանող, սակայն գույքի իրական պատկանելիությունը թաքցնելու նպատակով Բ.Ա.-ի անվամբ գրանցված՝ ***** ****** ****_***** *******, *_** **********, */* հասցեի հողամասում գտնվող 0.34 հա մակերեսով հողամասը Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող՝ ***** ***** ****** հարակից տարածքում գտնվող, 3400 քմ մակերեսով հողամասի հետ փոխանակելու վերաբերյալ: Արդյունքում Բ.Ա.-ին փոխանցվել է 0.34 հա մակերեսով՝ *. *****, ****, ****** ***** **/** հասցեի հողամասը, որը Բ.Ա.-ն 2019 թվականի հուլիսի 30-ին՝ 38.000.000 ՀՀ դրամով վաճառել է Ռ.Ֆ.-ին:*

Ա.Ե.-ն եղբայրների անվամբ գրանցված հողամասերը 2019 թվականի օգոստոսի 14-ին կնքված պայմանագրերով վաճառել է ընդհանուր 109.250.000 ՀՀ դրամով, իսկ իր անվամբ գրանցված հողամասը՝ 2019 թվականի դեկտեմբերի 28-ին կնքված պայմանագրով վաճառել է 14.000.000 ՀՀ դրամով:

Այսպիսով, նկարագրված դիտավորյալ գործողությունների հետևանքով Ա.Ե.-ն և Գ.Ս.-ն խմբի կազմում՝ նախնական համաձայնությամբ, Ա.Հ.-ի օժանդակությամբ

ակնհայտ կեղծ փաստաթղթերի օգտագործմամբ նախ խարդախությամբ հափշտակել են առանձնապես խոշոր չափերով՝ շուրջ 110.000.000 ՀՀ դրամ արժեքով հողամասը, ապա Ա.Ե.-ն՝ Ա.Հ.-ի, Սուրեն և Կարեն Երեմյանների, Բ.Ա.-ի օժանդակությամբ, իսկ Գ.Ս.-ն՝ Կարեն Մկրտչյանի օժանդակությամբ, թաքցրել են հափշտակության առարկա հանդիսացած հիշյալ հողամասի իրենց մասնաբաժնների (Ա.Ե.-ն՝ 6700 քմ, Գ.Ս.-ն՝ 700 քմ մակերեսով) իրական պատկանելիությունը, դրանով խեղաթյուրել նշված գույքի հանցավոր ծագումը, տնօրինել հանցավոր ծագում ունեցող գույքը, ինչի արդյունքում օրինականացրել են հանցավոր ճանապարհով ստացված, առանձնապես խոշոր չափերով՝ 110.000.000 ՀՀ դրամ արժեքով հողամասը: (…)»[3]:

5.3. Նույնանման փաստական հանգամանքներով ՀՀ քրեական օրենսգրքի 38-190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով հանրային քրեական հետապնդում է հարուցվել նաև Սուրեն Երեմյանի նկատմամբ[4]:

5.4. Կարեն Մկրտչյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 38-190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով ՀՀ քրեական օրենսգրքի 38-190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով հանրային քրեական հետապնդում է հարուցվել հանրորեն վտանգավոր այն արարքների համար, որ *«(…) [Ն]ա օժանդակել է Գ.Ս.-ին օրինականացնել հանցավոր ճանապարհով ստացված առանձնապես խոշոր չափերով անշարժ գույքը:*

Այսպես.

Ա.Ե.-ն տևական ժամանակ ճանաչել և տարբեր հարցերով շփումներ է ունեցել 01.01.2008 թվականից մինչև 07.10.2011 թվականը Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավորի օգնականի պաշտոն զբաղեցնող և դատավոր Ա.Մ.-ին կցված Գ.Ս.Ս.-ի հետ:

2012 թվականի օգոստոսի սկզբին Ա.Ե.-ն և Գ.Ս.-ն նախնական համաձայնություն են ձեռք բերել խաբեության եղանակով, Երևան քաղաքին պատկանող, առանձնապես խոշոր չափերով, շուրջ՝ 110.000.000 ՀՀ դրամ շուկայական արժեքով գույք հափշտակելու հարցում: Հիշյալ մտադրությունն իրականացնելու համար

---

[3] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 6, թերթեր 168-172:
[4] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 6, թերթեր 173-177:

վերջիններս օգտագործելու նպատակով նախնական համաձայնությամբ ձեռք են բերել քննությամբ չպարզված հանգամանքներում պատրաստված իրավաբանական նշանակություն ունեցող փաստեր հաստատող բովանդակությամբ ամբողջովին կեղծ փաստաթղթեր, մասնավորապես.

*- Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի պետական արխիվից իբրև 10.02.2000 թվականի թիվ 02-20/37 գրությամբ տրված՝ Հայկական ՍՍՀ Երևանի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի՝ 1990 թվականի հոկտեմբերի 8-ին կայացած նիստի թիվ 24/32 արձանագրության քաղվածքի պատճենն այն մասին, որ իբրև Երևանի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի՝ 1990 թվականի հոկտեմբերի 8-ի որոշմամբ հասարակական սննդի օբյեկտ կառուցելու համար «Նինա» կոոպերատիվին, հանձինս՝ նախագահ Թ.Գ.-ի, **** ***** *_** միկրոշրջանում հատկացվել է 0,75 հա մակերեսով հողատարածք,*

*- 05.10.1998 թվականի ամսաթվով կազմված առուվաճառքի պայմանագրի պատճենն այն մասին, որ իբրև նշված օրը Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանում կնքված պայմանագրով Թ.Գ.-ն **** *** *_** ********* */* և */* ******* ****** ******** գտնվող, 0,75 հա մակերեսով հիշյալ տարածքը 4.000.000 ՀՀ դրամով վաճառել է Ա.Ե.-ի վարորդ Ա.Հ.Հ.-ին:*

Նշված փաստաթղթերը կազմվել են այն պայմաններում, որ Երևանի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեն Թ.Գ.-ին որևէ հողատարածք չի հատկացրել և այն կեղծ փաստաթուղթ կազմելու օրվա դրությամբ շարունակել է գտնվել Երևան համայնքի օրինական տիրապետման ներքո:

Վերոհիշյալ կեղծ փաստաթղթերի հիման վրա հողամասն անշարժ գույքի կադաստրի կոմիտեում գրանցելու և տնօրինելու հնարավորություն ստանալու նպատակով Ա.Ե.-ի և Գ.Ս.-ի միջև ձեռք բերված պայմանավորվածության համաձայն՝ 2012 թվականի օգոստոսի 9-ին Ա.Ե.-ի վարորդ Ա.Հ.-ն հիշյալ ակնհայտ կեղծ փաստաթղթերի օգտագործմամբ իր անվամբ իրավաբանական նշանակություն ունեցող փաստի հաստատման պահանջի մասին դիմում է ներկայացրել Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ այդ կերպ միջոցներ տրամադրելու եղանակով օժանդակելով Ա.Ե.-ի և Գ.Ս.-ի կողմից նախնական համաձայնությամբ

հարդահությամբ առանձնապես խոշոր չափերով Երևան համայնքին պատկանող գույքի հափշտակությանը:

*Դատական գործին շնորհվել է թիվ ***/****/**/** համարը, որը 2012 թվականի օգոստոսի 10-ին վարույթ է ընդունել նույն դատարանի դատավոր Ա.Մ.-ն: Քննության առնելով թիվ ***/****/**/** քաղաքացիական գործը՝ դատավոր Ա.Մ.-ն 2012 թվականի սեպտեմբերի 3-ին վճռել է Ա.Հ.Հ.-ի դիմումը բավարարել և հաստատել իրավաբանական նշանակություն ունեցող փաստն այն մասին, որ Ա.Հ.Հ.-ն հանդիսանում է ***** ****** **** ****** *_** ********* */* և */ ******** ***** ***** տարածքի՝ 0,75 հա մակերեսով հողամասի սեփականատերը:*

*Այնուհետև, Երևանի քաղաքապետարան ներկայացված դիմումի հիման վրա Երևանի քաղաքապետի՝ 2012 թվականի հոկտեմբերի 8-ի որոշմամբ հիշյալ հողամասին տրվել է առանձին հասցե, այն է՝ *.*****, ****_***** ********, *_** ******** */*: Դրանից հետո՝ 2012 թվականի հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին, համապատասխան դիմումներով վերոհիշյալ, ինչպես նաև հողամասի սահմանների ճշգրտման վերաբերյալ մի շարք փաստաթղթեր Ա.Հ.-ի կողմից ներկայացվել են ՀՀ կադաստրի կոմիտե, որի արդյունքում 2012 թվականի դեկտեմբերի 11-ին *.*****, ****-****** *******, *_** ********* */* հասցեում գտնվող, 0.74 հա մակերեսով հողամասը կեղծ փաստաթղթերի միջոցով ձևականորեն ձևակերպվել է Ա.Հ.-ի անվամբ, սակայն փաստացի պատկանել է Ա.Ե.-ին և Գ.Ս.-ին՝ այդ կերպ վերջիններս Ա.Հ.-ի օժանդակությամբ ակնհայտ կեղծ փաստաթղթերի օգտագործմամբ խմբի կազմում նախնական համաձայնությամբ հափշտակել են Երևան համայնքին պատկանող առանձնապես խոշոր չափերով՝ 110.000.000 ՀՀ դրամ արժողությամբ գույքը:*

Այնուհետև, Ա.Ե.-ն Ա.Հ.-ի, Սուրեն և Կարեն Երեմյանների, Բ.Ա.-ի, իսկ Գ.Ս.-ն՝ Կարեն Մկրտչյանի օժանդակությամբ հանցավոր ճանապարհով ստացված, Երևան համայնքին պատկանող և երբևէ չօտարված հիշյալ գույքի՝ յուրաքանչյուրն իրեն հասանելիք բաժնեմասի ծագման աղբյուրը, տնօրինման եղանակը, պատկանելիությունը, իրավունքները թաքցնելու և խեղաթյուրելու, ինչպես նաև հանցավոր հետքերը վերացնելու նպատակով մի շարք ձևական պայմանագրեր կնքելու, այդ կերպ՝ օրինական ճանապարհով գույքի ձեռքբերման պատրանք ստեղծելու եղանակով, ինչպես նաև հանցավոր ծագում ունեցող գույքի տնօրինմամբ

*օրինականացրել են հափշտակության առարկա հանդիսացած՝ ***** ******* ****-****** *******, *-** **********, */* հասցեում գտնվող հողամասը (Ա.Ե.-ն՝ 0.33 հա և 0.34 հա մակերեսով, Գ.Ս.-ն՝ 700 քմ մակերեսով մասնաբաժինները):*

Մասնավորապես՝ Ա.Հ.-ի մասնակցությամբ 2013 թվականի հունվարի 8-ին կնքված անշարժ գույքի նվիրատվության ձևական պայմանագրով հափշտակության առարկա հանդիսացած հողամասի իրական պատկանելիությունը թաքցնելու նպատակով այն նախ գրանցվել է Ա.Ե.-ի եղբոր՝ Սուրեն Երեմյանի, Գ.Ս.-ի ընկերոջ՝ Կարեն Մկրտչյանի և Երևան համայնքի Ավան վարչական շրջանի նախկին ղեկավար Մ.Ջ.-ի վարորդ Բ.Ա.-ի անվամբ, որից հետո՝ 2013 թվականի հունվարի 17-ին, հիշյալ անձանց միջև կնքված հողաբաժանման պայմանագրով (Ա.Ե.-ն հափշտակության առարկա հանդիսացած հողամասի իր՝ 0.33 հա մակերեսով մասնաբաժինը գրանցել է եղբոր՝ Սուրեն Երեմյանի անվամբ, իսկ Գ.Ս.-ն խարդախության առարկա հանդիսացող իր՝ 700 քմ մակերեսով Կարեն Մկրտչյանի անվամբ ձևականորեն գրանցված մասնաբաժինը 2013 թվականին կնքված նվիրատվության պայմանագրով գրանցել է իր անվամբ, որից հետո 12.000 ԱՄՆ դոլարի դիմաց գրավադրել բանկում:

2013 և 2015 թվականներին, Ա.Ե.-ի, Սուրեն Երեմյանի, նրանց ազգական Կարեն Երեմյանի և Երևան քաղաքի բնակիչ Ա.Պ.-ի միջև կնքվել են առուվաճառքի վերաբերյալ ձևական պայմանագրեր, մասնավորապես՝ 2013 թվականի նոյեմբերի 7-ին Սուրեն Երեմյանի և Ա.Պ.-ի միջև կնքված հողամասի առուվաճառքի պայմանագրով Ա.Պ.-ն Սուրեն Երեմյանից իբրև 12.000.000 ՀՀ դրամով գնել է 0.33 հա մակերեսով հողամասը, սակայն երկու տարի անց՝ 2015 թվականի դեկտեմբերի 15-ին, հիշյալ հողամասի շուկայական արժեքի նախկինից ակնհայտ բարձր լինելու պայմաններում, Ա.Պ.-ն իր կողմից ձեռք բերված արժեքից 5.000.000 ՀՀ դրամ պակաս գնով՝ 7.000.000 ՀՀ դրամով, կրկին ձևական առուվաճառքի պայմանագրով վաճառել է Ա., Սուրեն և Կարեն Երեմյաններին:

Այնուհետև արդեն իսկ իր և եղբայրների անվամբ գրանցված, 76.020.000 ՀՀ դրամ արժեք ունեցող հիշյալ հողամասը 2016 թվականի ապրիլի 6-ին կնքված անշարժ գույքի գրավի թիվ 57096 պայմանագրով Ա.Ե.-ի կողմից գրավադրել է «ՊրոԿրեդիտ Բանկ» ՓԲ ընկերությունում, որի հիման վրա Ա.Ե.-ին փաստացի

*պարկանող «*** * ******» ՍՊ ընկերությանը բանկի կողմից տրամադրվել են վարկային միջոցներ:*

Հետագայում հիշյալ հանցավոր ծագում ունեցող գույքը՝ հողամասը, նորից բաժանվել է եղբայրների միջև, որից 0,1 հա մակերեսով հողակտորը գրանցվել է Ա.Ե.-ի, իսկ 0,23 հա մակերեսով հողամասը՝ Սուրեն և Կարեն Երեմյանների անվամբ:

*Երևանի քաղաքապետի՝ 27.06.2016թ թիվ Ն-2343-Ա որոշմամբ Երևանի ավագանին տվել է իր համաձայնությունը՝ փաստացի Ա.Ե.-ին պատկանող, սակայն գույքի իրական պատկանելիությունը թաքցնելու նպատակով Բ.Ա.-ի անվամբ գրանցված՝ ***** ******* ****_***** *******, *_** *********, */* հասցեի հողամասում գտնվող 0.34 հա մակերեսով հողամասը Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող՝ ****** ******* ******* ******* տարածքում գտնվող, 3400 քմ մակերեսով հողամասի հետ փոխանակելու վերաբերյալ: Արդյունքում Բ.Ա.-ին փոխանցվել է 0.34 հա մակերեսով՝ *.*****, *****, ******* ****** **/** հասցեի հողամասը, որը Բ.Ա.-ն 2019 թվականի հուլիսի 30-ին՝ 38.000.000 ՀՀ դրամով վաճառել է Ռ.Ֆ.-ին:*

Ա.Ե.-ն եղբայրների անվամբ գրանցված հողամասերը 2019 թվականի օգոստոսի 14-ին կնքված պայմանագրերով վաճառել է ընդհանուր 109.250.000 ՀՀ դրամով, իսկ իր անվամբ գրանցված հողամասը՝ 2019 թվականի դեկտեմբերի 28-ին կնքված պայմանագրով վաճառել է 14.000.000 ՀՀ դրամով:

Այսպիսով, նկարագրված դիտավորյալ գործողությունների հետևանքով Ա.Ե.-ն և Գ.Ս.-ն խմբի կազմում՝ նախնական համաձայնությամբ, Ա.Հ.-ի օժանդակությամբ ակնհայտ կեղծ փաստաթղթերի օգտագործմամբ նախ խարդախությամբ հափշտակել են առանձնապես խոշոր չափերով՝ շուրջ 110.000.000 ՀՀ դրամ արժեքով հողամասը, ապա Ա.Ե.-ն՝ Ա.Հ.-ի, Սուրեն և Կարեն Երեմյանների, Բ.Ա.-ի օժանդակությամբ, իսկ Գ.Ս.-ն՝ Կարեն Մկրտչյանի օժանդակությամբ, թաքցրել են հափշտակության առարկա հանդիսացած հիշյալ հողամասի իրենց մասնաբաժնների (Ա.Ե.-ն՝ 6700 քմ, Գ.Ս.-ն՝ 700 քմ մակերեսով) իրական պատկանելիությունը, դրանով խեղաթյուրել նշված գույքի հանցավոր ծագումը, տնօրինել հանցավոր ծագում ունեցող գույքը, ինչի արդյունքում օրինականացրել են

հանցավոր ճանապարհով ստացված, առանձնապես խոշոր չափերով՝ 110.000.000 ՀՀ դրամ արժեքով հողամասը: (...)»[5]:

5.5. Ներսես Հարությունյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով հանրային քրեական հետապնդում է հարուցվել հանրորեն վտանգավոր այն արարքների համար, որ *«(...) [Ն]ա Վարդան Միրզոյանի, Գառնիկ Մովսիսյանի, Սլավիկ Սարգսյանի և Արկադի Համբարձումովի օժանդակությամբ օրինականացրել է հանցավոր ճանապարհով ստացված առանձնապես խոշոր չափերով՝ 213.800.000 ՀՀ դրամ շուկայական արժեքով անշարժ գույքը:*

Այսպես.

2013 թվականի հունվարին Ա.Լ.Ե.-ն իր մտերիմ, փաստաբանական գործունեություն իրականացնող Ներսես Սահակի Հարությունյանի, Գ.Ս.Ս.-ի և Ա.Վ.Մ.-ի հետ նախնական համաձայնություն է ձեռք բերել խաբեության եղանակով, Երևան քաղաքին պատկանող, առանձնապես խոշոր չափերով, շուրջ՝ 213.800.000 ՀՀ դրամ շուկայական արժեքով գույքը հափշտակելու հարցում:

Հիշյալ մտադրությունն իրականացնելու համար վերջիններս օգտագործելու նպատակով ձեռք են բերել քննությամբ չպարզված հանգամանքներում պատրաստված իրավաբանական նշանակություն ունեցող փաստեր հաստատող բովանդակությամբ ամբողջովին կեղծ փաստաթղթեր, մասնավորապես.

- Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի պետական արխիվից իբրև 10.02.2000 թվականի թիվ 02-21/39 գրությամբ տրված՝ Հայկական ՍՍՀ Երևանի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի՝ 1986 թվականի մայիսի 19-ին կայացած նիստի թիվ 7/85 արձանագրության քաղվածքի պատճենն այն մասին, որ իբրև Երևանի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի՝ 1986 թվականի մայիսի 19-ի որոշմամբ 26 հոգու, այդ թվում՝ Վ.Ա.-ին հատկացվել է ընդհանուր 2.61հա հողատարածք, յուրաքանչյուրին՝ 0.1 հա մակերեսով՝ բնակարան կառուցելու համար,

[5] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 6, թերթեր 151-155:

- «Համաձայնություն» վերտառությամբ, միայն Վ.Ա.-ի ստորագրությամբ, ձեռագիր գրառմամբ, 10.06.1991 թվականի ամսաթվով կազմված թղթի պատճենը, որի համաձայն՝ իբրև գործկոմի որոշումով հողակտոր ստացած բնակիչները տվել են իրենց համաձայնությունն առ այն, որ Լ.Գ.-ն վաճառի իրենց հատկացված հողը Վ.Ք.Ա.-ին, իսկ Վ.Ա.-ն պարտավորվել է վաճառելուց հետո ստացած գումարը բաժանել վերը նշված անձանց միջև,

*- «Առուվաճառք» վերտառությամբ միայն Վ.Ա.-ի ստորագրությամբ, 07.05.1990 թվականի ամսաթվով, ձեռագիր գրառմամբ կազմված թղթի պատճեն, որի համաձայն՝ իբրև Վ.Ա.-ն ***** *** ******* ***** տարածքում գտնվող 2.61 հա մակերեսով տարածքը 10.000 ռուբլիով վաճառել է Գառնիկ Մովսիսյանին, Արկադի Համբարձումովին, Վարդան Միրզոյանին և Սլավիկ Սարգսյանին:*

Վերոգրյալ փաստաթղթերը կազմվել են այն պայմաններում, որ Երևանի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեն Վ.Ա.-ին և մյուսներին ընդհանուր 2.61 հա հողամաս չի հատկացրել և կեղծ փաստաթուղթ կազմելու օրվա դրությամբ շարունակել է գտնվել Երևան համայնքի օրինական տիրապետման ներքո:

*Վերոհիշյալ կեղծ փաստաթղթերի հիման վրա հողամասն անշարժ գույքի կադաստրի կոմիտեում գրանցելու և տնօրինելու հնարավորություն ստանալու նպատակով Ա.Ե.-ի, Գ.Ս.-ի, Ներսես Հարությունյանի և Ա.Մ.-ի միջև ձեռք բերված պայմանավորվածության համաձայն՝ 2013 թվականի հունվարի 29-ին Ա.Ե.-ի մորաքրոջ ամուսինը՝ Արկադի Համբարձումովը, Գ.Ս.-ի հայրը՝ Սլավիկ Սարգսյանը, Ներսես Հարությունյանի կնոջ հայրը՝ Գառնիկ Մովսիսյանը և Ա.Մ.-ի հայրը՝ Վարդան Միրզոյանը, հիշյալ ակնհայտ կեղծ փաստաթղթերի օգտագործմամբ իրենց անունից լիազորված անձ Ն.Ս-ի միջոցով դիմում են ներկայացրել Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ խնդրելով հաստատել իրավաբանական նշանակություն ունեցող այն փաստը, որ դիմումատուներ Վարդան Միրզոյանը, Գառնիկ Մովսիսյանը, Սլավիկ Սարգսյանը և Արկադի Համբարձումովը հանդիսանում են ***** ****** ***** *** ****** ***** տարածքում գտնվող, 2.61 հա մակերեսով տարածքի սեփականատերեր՝ այդ կերպ միջոցներ տրամադրելու եղանակով օժանդակելով Ա.Ե.-ի, Ներսես Սահակի Հարությունյանի, Գ.Ս.Ս.-ի և Ա.Վ.Մ.-ի կողմից նախնական համաձայնությամբ*

հարդահությամբ առանձնապես խոշոր չափերով Երևան համայնքին պատկանող գույքի հափշտակությանը:

*Դատական գործին շնորհվել է թիվ ***/****/**/** համարը, որը 2013 թվականի հունվարի 29-ին վարույթ է ընդունվել դատավոր Ա.Մ.-ի կողմից: Քննության առնելով թիվ ***/****/**/** քաղաքացիական գործը՝ դատավոր Ա.Մ.-ն 2013 թվականի փետրվարի 11-ի վճռով Վարդան Միրզոյանի, Գառնիկ Մովսիսյանի, Սլավիկ Սարգսյանի և Արկադի Համբարձումովի դիմումը բավարարել է և հաստատել իրավաբանական նշանակություն ունեցող այն փաստը, որ դիմումատուներ Վարդան Միրզոյանը, Գառնիկ Մովսիսյանը, Սլավիկ Սարգսյանը և Արկադի Համբարձումովը սեփականության իրավունքով տիրապետում են ****** ****** ***** *** ****** ****** տարածքում գտնվող, 2.61 հա մակերեսով հողամասը և հանդիսանում են սեփականատերեր:*

*Այնուհետև, Երևանի քաղաքապետարան ներկայացված դիմումների հիման վրա Երևանի քաղաքապետի՝ 2013 թվականի ապրիլի 8-ի և 17-ի որոշումներով Արկադի Համբարձումովի, Վարդան Միզոյանի, Գառնիկ Մովսիսյանի և Սլավիկ Սարգսյանի անվամբ գրանցված, ***** **** ******* ***** ******* գտնվող 2.61 հա (1.1 հա+1.51 հա) մակերեսով հողամասներին տրամադրվել են հացեներ, համապատասխանաբար՝ ***** *** ****** *** (1.1 հա) և ****** *** ***** ***/* (1.51 հա): 2013 թվականի հունիսին համապատասխան դիմումներով վերոհիշյալ փաստաթղթերը ներկայացվել են ՀՀ կադաստրի կոմիտե, որի հիման վրա 2013 թվականի հունիսի 28-ին *.*****, ***-*****, ***** **** ***** ***/* հացեում գտնվող, 1.51 հա մակերեսով և *.*****, ***-****, **** ***** ***** *** հացեում գտնվող 1.1 հա մակերեսով հողամասերը կեղծ փաստաթղթերի միջոցով ձևականորեն ձևակերպվել են Արկադի Համբարձումովի, Սլավիկ Սարգսյանի, Գառնիկ Մովսիսյանի և Վարդան Միրզոյանի անվամբ, սակայն փաստացի պատկանել են Ա.Ե.-ին, Ներսես Հարությունյանին, Գ.Ս.-ին և Ա.Մ.-ին՝ այդ կերպ վերջիններս Արկադի Համբարձումովի, Սլավիկ Սարգսյանի, Գառնիկ Մովսիսյանի և Վարդան Միրզոյանի օժանդակությամբ ակնհայտ կեղծ փաստաթղթերի օգտագործմամբ խմբի կազմում նախնական համաձայնությամբ հափշտակել են Երևան համայնքին պատկանող*

առանձնապես խոշոր չափերով՝ 213.800.000 ՀՀ դրամ արժողությամբ գույքը՝ միաժամանակ թաքցնելով հիշյալ գույքի իրական պատկանելիությունը:

*Դրանից հետո, Ա.Ե.-ն 2013 թվականի սեպտեմբերի 25-ին անձամբ դիմումներ է ներկայացրել ՀՀ կադաստրի կոմիտե և ստացել միասնական տեղեկանք՝ *.*****, ***** **** *** և *.*****, ***** ***** ***/* հասցեներում գտնվող անշարժ գույքերի սեփականատերերի վերաբերյալ:*

*Այնուհետև, ակնհայտ հանցավոր ճանապարհով ստացված, Երևան համայնքին պատկանող և երբևէ չօտարված հիշյալ գույքերի ծագման աղբյուրը, տնօրինման եղանակը, իրավունքները, պատկանելիությունը թաքցնելու և խեղաթյուրելու նպատակով, ինչպես նաև հանցավոր հետքերը վերացնելու համար մի շարք ձևական պայմանագրեր կնքելու, այդ կերպ՝ օրինական ճանապարհով գույքի ձեռքբերման պատրանք ստեղծելու եղանակով Ա.Ե.-ն, Ա.Մ.-ն և Ներսես Հարությունյանը Վարդան Միրզոյանի, Գառնիկ Մովսիսյանի, Սլավիկ Սարգսյանի և Արկադի Համբարձումովի օժանդակությամբ օրինականացրել են հափշտակության առարկա հանդիսացած՝ ***** ******, ***** *** ******* գտնվող, ընդհանուր 2.61 հա մակերեսով հողամասի՝ Արկադի Համբարձումովի անվամբ ձևականորեն գրանցված, սակայն փաստացի Ա.Ե-ին պատկանող՝ 1,75 հա մակերեսով, Գ.Ս.-ի հոր՝ Սլավիկ Սարգսյանի անվամբ ձևականերեն գրանցված, սակայն փաստացի Ա.Ե-ին պատկանող՝ 0.28 և 0.02 հա մակերեսներով, Վարդան Միրզոյանի անվամբ ձևականորեն գրանցված, սակայն փաստացի Ա.Մ.-ին պատկանող՝ 0.41 հա մակերեսով, Գառնիկ Մովսիսյանի անվամբ ձևականորեն գրանցված, սակայն փաստացի Ներսես Հարությունյանին պատկանող՝ 0.09 հա մակերեսով մասնաբաժինները:*

*Մասնավորապես՝ 2013 թվականի հոկտեմբերի 3-ին Վարդան Միրզոյանի, Գառնիկ Մովսիսյանի, Սլավիկ Սարգսյանի և Արկադի Համբարձումովի միջև կնքված անշարժ գույքի բաժանման պայմանագրի ուժով *.*****, ***** **** *** հասցեում գտնվող 1,1 հա մակերեսով հողամասը բաժանվել է մասերի, որից՝ Վարդան Միրզոյանին փոխանցվել է 0,219495 հա, Գառնիկ Մովսիսյանին՝ 0,094696 հա, Արկադի Համբարձումովին՝ 0,442397 հա, իսկ Սլավիկ Սարգսյանին՝ 0,28332 և 0,020291 հա:*

*Վերը նշված չորս անձանց միջև նույն օրը կնքված անշարժ գույքի բաժանման պայմանագրի ուժով՝ *.*****, ***** **** ***/* հասցեում գտնվող 1,51 հա մակերեսով հողամասը բաժանվել է 2 մասի, որից 0,2 հա մակերեսով հողամասը որպես սեփականություն անցել է Վարդան Միրզոյանին, իսկ 1,309862 հա մակերեսով հողամասը՝ Գառնիկ Մովսիսյանին, Սլավիկ Սարգսյանին և Արկադի Համբարձումովին, որից հետո 25.04.2015 թվականին Գառնիկ Մովսիսյանի, Սլավիկ Սարգսյանի և Արկադի Համբարձումովի միջև կնքված անշարժ գույքի բաժինների առուվաճառքի ձևական պայմանագրի ուժով՝ իբրև Արկադի Համբարձումովը 10.000.000 ՀՀ դրամ գումարով գնել է Գառնիկ Մովսիսյանի և Սլավիկ Սարգսյանի 1/3-րդ ական բաժինները: Գործարքի արդյունքում 2015 թվականի մայիսի 6-ին *.*****, ***** *** ******** գտնվող շուրջ 1,31 հա մակերեսով հողամասը, որին տրվել է *.*****, *** **** ***** **** ***** ***/* հասցեն, գրանցվել է Արկադի Համբարձումովի անվամբ, իսկ 0,28 և 0,02 հա մակերեսով հողատարածքները՝ Սլավիկ Սարգսյանի անվամբ, սակայն դրանց փաստացի սեփականատեր է հանդիսացել Ա.Ե.-ն:*

Այսինքն՝ խոշոր չափի հողամասերի տրոհման միջոցով՝ բաժանման և առուվաճառքի վերաբերյալ ձևական պայմանագրերի կնքման արդյունքում, Ա.Ե.-ն, Ներսես Հարությունյանը և Ա.Մ.-ն՝ Արկադի Համբարձումովի, Վարդան Միրզոյանի, Գառնիկ Մովսիսյանի, Սլավիկ Սարգսյանի օժանդակությամբ խեղաթյուրել են Երևան համայնքին պատկանող, երբևէ որևէ անձի չօտարված և չհատկացված հիշյալ գույքի ծագման աղբյուրը, թաքցրել հանցավոր հետքերը և հափշտակության ավարտից կարճ ժամանակ անց Արկադի Համբարձումովի անվամբ արդեն իսկ ձևական գրանցված է եղել ընդհանուր 1,752397 հա, Սլավիկ Սարգսյանի անվամբ՝ 0,28 և 0,02 հա մակերեսով հողամասեր, որոնք ամբողջությամբ փնտրինվել են Ա.Ե.-ի կողմից, Վարդան Միրզոյանի անվամբ գրանցված է եղել 0.41 հա մակերեսով հողատարածք, որը փնտրինվել է Ա.Մ.-ի կողմից, իսկ Գառնիկ Մովսիսյանի անվամբ գրանցված է եղել 0.09 հա մակերեսով հողատարածք, որը փնտրինվել է Ներսես Հարությունյանի կողմից:

*Հանցավոր ծագում ունեցող գույքի փնտրինման արդյունքում 2015 թվականի նոյեմբերի 26-ին կնքված անշարժ գույքի գրավի թիվ 5496 պայմանագրով Ա.Ե.-ն ***** *** ***/* հասցեում գտնվող, 1,31 հա մակերեսով, կողմերի համաձայնությամբ*

*108.360.000 ՀՀ դրամ արժեքով, հողամասը գրավադրել է «Պրոկրեդիտ» բանկում՝ որպես նրան պարտկանող «*** * ******» ՍՊ ընկերությանը տրամադրված վարկի գույքային ապահովագրություն, այնուհետև՝ 2019-2020 թվականների ընթացքում հողամասերը բաժանել է փոքր չափերի, շարունակել այդ եղանակով քողարկել և խեղաթյուրել գույքի հանցավոր ծագումը և փաստացի իրեն պատկանող, սակայն Արկադի Համբարձումովի անվամբ գրանցված հողամասերը վաճառել տարբեր անձանց:*

*Մասնավորապես, Սլավիկ Սարգսյանի անվամբ գրանցված 0,28 հա մակերեսով հողատարածքը բաժանվել է տարբեր մասերի և 17.10.2013թ. դրա մի մասը վաճառվել է Ն.Խ.-ին, իսկ մյուս մասը՝ 10.04.2014թ.-ին՝ Ա.Գ.-ին: 18.10.2019 թվականին ***** *** ***/** հասցեում գտնվող 0,4 հա մակերեսով հողատարածքը 20.300.000 ՀՀ դրամով վաճառել է Ս.Մ.-ին, ***** *** ***/* հասցեում գտնվող շուրջ 0,44 հա մակերեսով հողատարածքը 12.12.2019 թվականին 30.500.000 ՀՀ դրամով վաճառել է Մ.Մ.-ին, 13.03.2020 թվականին կնքված առուվաճառքի երեք պայմանագրերով ***** *** ***/**, ***** *** ***/**, ***** *** ***/** հասցեներում գտնվող համապատասխանաբար՝ 0.3, 0,3 և 0,31 հա մակերեսներ ունեցող հողամասերը ընդհանուր 96.000.000 ՀՀ դրամով վաճառել է Ա.Օ-ին:*

Հանցավոր ծագում ունեցող գույքի տնօրինման արդյունքում 2017թ. օգոստոսի 14-ին Ա.Մ.-ն Վարդան Միրզոյանի անվամբ գրանցված, սակայն փաստացի իրեն պատկանող 0.2 հա մակերեսով հողատարածքը բաժանել է տարբեր մասերի, որից 0.0309 հա մակերեսով հողատարածքը 28.000.000 ՀՀ դրամով վաճառել է Ա.Հ.-ին, իսկ 0.041 հա մակերեսով հողատարածքը 2.800.000 ՀՀ դրամով 27.05.2019թ. վաճառել է Ա.Մ.-ին, 20.05.2019թ.-ին 0,041 հա մակերեսով հողատարածքը վաճառել է Ա.Ք.-ին՝ 2.800.000 ՀՀ դրամով, 0.0461 հա մակերեսով հողատարածքը 20.05.2019թ. վաճառել է Ա.Ն.-ին՝ 3.000.000 ՀՀ դրամ արժեքով, 0.041 հա մակերեսով հողատարածքը 04.04.2019թ. վաճառել է Հ.Պ.-ին՝ 3.000.000 ՀՀ դրամ արժեքով:

Հանցավոր ծագում ունեցող գույքի տնօրինման արդյունքում Ներսես Հարությունյանը Գառնիկ Մովսիսյանի անվամբ գրանցված, սակայն փաստացի իրեն պատկանող 0.09 հա մակերեսով գույքն օտարել է 2013 թվականին՝ 32.000 ԱՄՆ դոլարով:

Վերը նկարագրված դիտավորյալ գործողությունների հետևանքով Ա.Ե-ն, Գ.Մ-ն, Ներսես Հարությունյանը և Ա.Մ-ն խմբի կազմում, նախնական համաձայնությամբ, ակնհայտ կեղծ փաստաթղթի օգտագործմամբ, Վարդան Միրզոյանի, Գառնիկ Մովսիսյանի, Սլավիկ Սարգսյանի և Արկադի Համբարձումովի օժանդակությամբ հափշտակել են առանձնապես խոշոր չափերի՝ շուրջ 213.800.000 ՀՀ դրամ արժեքով հողամասը, ապա Ա.Ե-ն, Ներսես Հարությունյանի և Ա.Մ-ն՝ Վարդան Միրզոյանի, Գառնիկ Մովսիսյանի, Սլավիկ Սարգսյանի և Արկադի Համբարձումովի օժանդակությամբ թաքցրել են հափշտակության առարկա հանդիսացած հիշյալ հողամասի իրենց մասնաբաժնի իրական պատկանելիությունը, դրանով խեղաթյուրել դրա հանցավոր ծագումը, տնօրինել ակնհայտ հանցավոր ծագում ունեցող գույքը, ինչի արդյունքում օրինականացրել են հանցավոր ճանապարհով ստացված, առանձնապես խոշոր չափերով, ընդհանուր՝ 213.800.000 ՀՀ դրամ արժեքով հողամասերը: (…)»[6]*:*

6. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2025 թվականի նոյեմբերի 3-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Սույն որոշման նախորդ կետում նշված իրավակարգավորումները կիրառելով (…) թիվ 62209623 քրեական վարույթը նախաձեռնելու արձանագրությամբ նկարագրված և սույն գործով մեղադրյալներին մեղսագրվող փաստական հանգամանքների նկատմամբ՝ Դատարանը հարկ է համարում արձանագրել, որ ինչպես բխում է սույն որոշման 1-ին և 2-րդ կետերից թիվ 62209623 քրեական վարույթից որպես նոր վարույթ անջատվել է երեք դրվագ ՀՀ քրեական օրենսգրքի 482-րդ հոդվածի 1-ին մասով (…) իրականացվող ՀՀ հակակոռուպցիոն դատարանին ընդդատյա քրեական վարույթը, որը հետագայում նախաքննությունը շարունակելու նպատակով ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտեի տնտեսական հանցագործությունների և մաքսանենգությունների քննության գլխավոր վարչություն, այնուհետև կազմված մեղադրական եզրակացությամբ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան:*

[6] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 6, թերթեր 156-161:

Տվյալ դեպքում Դատարանը հարկ է համարում արձանագրել, (...) [որ] մեղադրյալներին մեղսագրվող ենթադրյալ արարքների նկարագրությունից և սույն որոշման 2-րդ կետում առկա քրեական վարույթ նախաձեռնելու արձանագրությամբ առկա ենթադրյալ դեպքերի իրադարձությունների նկարագրություններից ակնհայտ է, որ մեղադրյալներին մեղսագրվող ենթադրյալ արարքները փոխկապակցված են ՀՀ հակառուպցիոն դատարանին ընդդատյա սույն քրեական վարույթից անջատված թիվ 62214324 քրեական վարույթի հետ:

Ավելին՝ Դատարանը հարկ է համարում արձանագրել նաև, որ վերը նշված փոխկապակցվածության մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ (...) մեղադրյալներին մեղսագրվող արարքների նկարագրությունից բխում է, որ ենթադրյալ վճռի կայացման արդյունքում է, որ ենթադրաբար ենթադրյալ հողամասերը հատկացվել են համապատասխան անձանց, որի արդյունքում այդ անձինք ենթադրաբար կատարելով նկարագրված գործողությունները ենթադրաբար կատարել են փողերի լվացում:

Բացի վերը նշվածը հարկ է արձանագրել նաև, որ սույն որոշման 2.1-2.8-րդ կետերում առկա նկարագրությունից կարելի է հանգել եզրակացության, որ եթե համապատասխան ենթադրյալ վճիռը չկայացվեր և համապատասխան հողամասերը ենթադրաբար չտրամադրվեին համապատասխան անձանց, հնարավոր չէր լինի այդ ենթադրյալ հողամասերի նկատմամբ որոշակի ենթադրյալ գործողությունների կատարման արդյունքում ենթադրաբար կատարել փողերի լվացում:

Այսպիսով պետք է փաստել, որ սույն վարույթի նյութերի, այդ թվում՝ մեղադրական եզրակացության ուսումնասիրությունից հետևում է, որ թիվ 62214324 քրեական վարույթն անջատվել է թիվ 62209623 կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ քրեական վարույթից և սույն քրեական գործով մեղադրյալներին ներկայացված մեղադրանքներն անմիջականորեն կապված են Հակակոռուպցիոն դատարանին ընդդատյա հիշյալ կոռուպցիոն հանցանքի վերաբերյալ վարույթի հետ:

Հետևաբար, հաշվի առնելով արդարադատության շահը, այդ թվում՝ վարույթի պատշաճ և համակողմանի քննությունն ապահովելու անհրաժեշտությունը,

Դատարանը գտնում է, որ սույն քրեական գործը ընդդատյա է Հակակոռուպցիոն դատարանին: (…)»[7]*:*

7. Հակակոռուպցիոն դատարանի՝ 2025 թվականի նոյեմբերի 24-ի որոշման համաձայն՝ *«(…) Մեղադրյալների մեղադրանքներում (…) բացակայում են ձևակերպումները, որ մեղադրյալները ենթադրյալ փողերի լվացումը և/կամ խարդախությունները կատարել են իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով, իսկ դատարանում վարույթն իրականացվում է միայն մեղադրյալի նկատմամբ և միայն նրանց ներկայացված մեղադրանքով, քանի որ առկա է անձնական պատասխանատվության սկզբունքը:*

Ինչ վերաբերում է այն հանգամանքին, որ սույն քրեական գործից (նախաքննական համար 62209623) մինչդատական վարույթում անջատվել է կոռուպցիոն բնույթի քրեական վարույթ (նախաքննական համար 62214324), որը ընդդատյա է Հակակոռուպցիոն դատարանին, ապա անհրաժեշտ է իրողությամբ փաստել, որ այս իրավիճակում պատկերն այլ է, այսինքն՝ համաձայն նորմի, եթե մինչդատական վարույթում միացված վարույթներից առնվազն մեկը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքի վերաբերյալ վարույթ է, ապա մեղադրանքը քննում է Հակակոռուպցիոն դատարանը, սակայն այս դեպքում՝ մինչդատական վարույթում քրեական վարույթից անջատվել է կոռուպցիոն բնույթի քրեական վարույթ, որը հետագայում ուղարկվել է դատարան, իսկ սույն վարույթն էլ առանձին ուղարկվել է իրավասու դատարան, որն ընդհանրապես չի հակասում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 10-րդ ու 260-րդ հոդվածներով սահմանված ընթացակարգերին:

Այս իրավիճակում առաջանում է այն հարցը, որ հսկող դատախազը, հանդիսանալով վարույթն իրականացնող, արդյոք կարող էր թիվ 62209623 քրեական վարույթն ուղարկել Հակակոռուպցիոն դատարան, թե ոչ: Եթե այո, ապա հավանական շրջապտույտից խուսափելու համար ինչով է պայմանավորված, որ այդ

[7] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 11, թերթեր 86-105:

կերպ չի վարվել և վարույթն ուղարկել է Երևանի քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան:

Դատարանը փաստում է, որ իրականացվող վարույթից նոր վարույթ կարող է առանձնացվել միայն այն պարագայում, երբ դա բացասաբար չի կարող անդրադառնալ վարույթի արդարացիության վրա և թելադրված է արդարադատության շահի պաշտպանության անհրաժեշտությամբ, որը տեղի է ունեցել մինչդատական վարույթի ընթացքում: Սակայն այս իրավիճակում հարց է առաջացել վարույթի արդարացիության վերաբերյալ, քանի որ դատարանում քննվում է մեղադրանքը, իսկ այս պարագայում արդեն սույն որոշմամբ արձանագրվել է, որ մեղադրանքների փաստական կողմում առկա ձևակերպումներից դուրս դատարանում քննության այլ շրջանակի հնարավորությունը բացակայում է: Ինչպես նաև այդ ամենի վերաբերյալ առկա իրավական գնահատականը չի հանդիսանում ՀՀ քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոոուպցիոն հանցանքներից, որպիսզի պայմաններում անհրաժեշտ է առաջնորդվել այն սկզբունքով, որ ոչ ոք չի կարող զրկվել իր գործն այն դատարանում և այն դատավորի կողմից քննվելու իրավունքից, որոնց ընդդատությանը կամ իրավասությանը այն վերապահված է օրենքով, ինչը կարող է տեղի ունենալ ստեղծված իրավիճակում:

Այս պարագայում կարող է առաջանալ մեկ այլ իրավիճակ, որ համանման դեպքերում, երբ մինչդատական վարույթն իրականացնողները անհրաժեշտ համարեն իրականացվող վարույթից նոր վարույթ անջատելը, բայց այլևս չկարողանան իրականացնել հայեցողական լիազորությունը, քանի որ եթե ցանկացած պարագայում անջատված վարույթները ընդդատյա են Հակակոոուպցիոն դատարանին, ապա առարկայազուրկ է վարույթից կոոուպցիոն բնույթի մաս անջատելը կամ հակառակը: Իսկ դա, որպես կանոն, իրականացվում է գործերով առավել համապարփակ քննություն կատարելու նպատակից ելնելով, քանի որ մեղադրյալն ունի ողջամիտ ժամկետում դատարանի առջև կանգնելու իրավունք, որին էլ հիմնականում միտված է այդպիսի անջատումը: Սակայն այդ իրավունքն ևս կարող է խախտվել, որն անթույլատրելի է:

(…) Վերոգրյալ իրավական նորմերի համակարգային վերլուծության արդյունքում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ արդարադատությունը՝ որպես դատական իշխանության դրսևորման հիմնական ձև, պետք է իրականացվի որոշակի սահմաններում, որի չափանիշներից մեկն էլ քրեական գործի ընդդատության ինստիտուտն է, որը սահմանում է, թե որ դատարանն է իրավասու քննել գործը, որպեսզի երաշխավորվեն անձի՝ դատարանի մատչելիության ու արդար դատաքննության իրավունքները, բացառելով քրեական գործը քննելու պատշաճ դատարանի որոշման վերաբերյալ վեճերը, որպիսի պայմաններում Դատարանը հաշվի առնելով քրեական գործով քննության առարկան հանդիսացող ենթադրյալ հանցանքի բնույթը և մինչդատական վարույթում մեղադրյալներին մեղսագրված արարքների քրեաիրավական որակումները, այն է՝ մեղադրյալներին ներկայացված մեղադրանքների համաձայն՝ նրանց կողմից ենթադրյալ փողերի լվացումը և/կամ խարդախությունները չեն կատարվել իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով, որպիսի պայմաններում Դատարանը գտնում է, որ թիվ ՀԿԴ/0322/01/25 (ԵԴ1/1560/01/25) քրեական գործն ընդդատյա չէ Հակակոռուպցիոն դատարանին՝ հաշվի առնելով, որ այն չի հանդիսանում ՀՀ քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքի վերաբերյալ վարույթ, ուստի անհրաժեշտ է թիվ ՀԿԴ/0322/01/25 քրեական գործն ուղարկել ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահին՝ ընդդատության վերաբերյալ վեճը լուծելու համար: (…)»[8]:

8. 2024 թվականի սեպտեմբերի 9-ին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը որոշում է կայացրել Ա.Լ.Ե.-ի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 2-րդ մասով, 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և Ա.Հ.Հ.-ի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով, 38-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 38-190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով թիվ

[8] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 11, թերթեր 123-149:

ԵԴ1/2129/01/24 քրեական վարույթը ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին[9]:

<u>Սույն որոշման հիմնավորումները և եզրահանգումը.</u>

9. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր է արդյոք Հակակոռուպցիոն դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԵԴ1/1560/01/25 (ՀԿԴ/0322/01/25) քրեական վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին:

10. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք*»:

11. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք*»:

11.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»*[10]:

Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ. *«Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ*

---

[9] Տե՛ս *www.datalex.am* Դատական տեղեկատվական համակարգ, թիվ *ԵԴ1/2129/01/24* քրեական վարույթը:

[10] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»[11]:

12. Վճռաբեկ դատարանն անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի հիմնարար նշանակության վերաբերյալ իրավական դիրքորոշում է ձևավորել *Գևորգ Հարությունյանի* որոշմամբ[12]:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 260-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության և Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարաններին (այսուհետ՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան) ընդդատյա են առաջին ատյանի կարգով իրականացվող բոլոր վարույթները, ինչպես նաև դատական երաշխիքների բոլոր վարույթները, բացառությամբ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ, այդ թվում՝ դատական երաշխիքների վարույթների, որոնք ընդդատյա են հակակոռուպցիոն դատարանին»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ *«1.Նախնական դատաքննությունների ընթացքում պարզելով, որ տվյալ վարույթն ընդդատյա չէ իրեն, դատարանն այն որոշմամբ անհապաղ փոխանցում է ըստ ընդդատության:*

(…)

5. Վարույթն ըստ ընդդատության ստացած հակակոռուպցիոն կամ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատաքննություն նշանակելը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին, եթե համաձայն չէ դրա առարկայական ընդդատությանը:

(…)

8. Սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի նախագահը, Վճռաբեկ դատարանի քրեական և հակակոռուպցիոն պալատների նախագահները վարույթը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից տասնօրյա

---

[11] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

[12] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

ժամկետում վերջնականապես լուծում են վարույթի առարկայական ընդդատության հարցը՝ ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ: Քվեարկելիս ձեռնպահ մնալ չի թույլատրվում:

9. Սույն հոդվածով սահմանված կարգով որոշված դատարանը համարվում է իրավասու դատարան»:

14. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը, փաստելով, որ թիվ 62214324 քրեական վարույթն անջատվել է թիվ 62209623 կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ քրեական վարույթից և սույն քրեական գործով մեղադրյալներին ներկայացված մեղադրանքներն անմիջականորեն կապված են Հակակոռուպցիոն դատարանին ընդդատյա հիշյալ կոռուպցիոն հանցանքի վերաբերյալ վարույթի հետ, գտել է, որ թիվ ԵԴ1/1560/01/25 քրեական վարույթն ընդդատյա է Հակակոռուպցիոն դատարանին:

Բացի այդ, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը գտել է, որ եթե ենթադրյալ վճիռը չկայացվեր և հողամասերը չտրամադրվեին համապատասխան անձանց, հնարավոր չէր լինի այդ հողամասերի նկատմամբ որոշակի ենթադրյալ գործողությունների կատարման արդյունքում ենթադրաբար կատարել փողերի լվացում[13]:

- Հակակոռուպցիոն դատարանը, արձանագրելով, որ մեղադրյալներին ներկայացված մեղադրանքներում բացակայում են այնպիսի ձևակերպումներ, որ վերջիններս ենթադրյալ հանցանքները կատարել են *«իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը»* օգտագործելով, գտել է, որ սույն քրեական վարույթն ընդդատյա չէ Հակակոռուպցիոն դատարանին[14]:

15. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշմամբ վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ պետք է փաստել, որ մեղադրյալներին ներկայացված մեղադրանքների ձևակերպումից հետևում է, որ ենթադրյալ հանցանքները ՀՀ

---

[13] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:
[14] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

քրեական օրենսգրքի «Կոռուպցիոն հանցանքների ցանկ» N 1 հավելվածով սահմանված՝ «*իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելու*» եղանակով կատարելու հատկանիշը վերջիններին մեղսագրված չէ: Բացի այդ, սույն վարույթի փաստական հանգամանքների պայմաններում, հաշվի առնելով նաև, որ նախաքննության փուլում գտնվող թիվ 62209623 քրեական վարույթով որևէ անձի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցված չէ, գտնում ենք, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի որոշմամբ ներկայացված հիմնավորումները բավարար չեն արձանագրելու, որ սույն քրեական վարույթով մեղադրյալներին ներկայացված մեղադրանքներն անմիջականորեն կապված են Հակակոռուպցիոն դատարանին ընդդատյա կոռուպցիոն հանցանքի վերաբերյալ վարույթի հետ: Նման պայմաններում սույն վարույթի՝ Հակակոռուպցիոն դատարանին ընդդատյա լինելու իրավական հիմքը բացակայում է:

16. Վերոշարադրյալը հիմք է տալիս փաստելու, որ Հակակոռուպցիոն դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԵԴ1/1560/01/25 (ՀԿԴ/0322/01/25) քրեական վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին, հիմնավոր է:

17. Հետևաբար, գտնում ենք, որ թիվ ԵԴ1/1560/01/25 (ՀԿԴ/0322/01/25) քրեական վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին:

Ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 8-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն Ք

Արկադի Գեորգիի Համբարձումովի վերաբերյալ՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով, 38-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 38-190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով,

Գառնիկ Սահակի Մովսիսյանի վերաբերյալ՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով, 38-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 38-190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով,

Սլավիկ Սմբատի Սարգսյանի վերաբերյալ՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով, 38-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 38-190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով,

Վարդան Չեչանի Միրզոյանի վերաբերյալ՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով, 38-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 38-190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով,

Կարեն Լյովայի Երեմյանի վերաբերյալ՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 38-190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով,

Կարեն Լևոնի Մկրտչյանի վերաբերյալ՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 38-190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով,

Ներսես Սահակի Հարությունյանի վերաբերյալ՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով,

Սուրեն Լևոնի Երեմյանի վերաբերյալ՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 38-190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով թիվ ԵԴ1/1560/01/25 (ՀԿԴ/0322/01/25) քրեական վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին:

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ	**ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՀԱՄԼԵՏ ԱՍԱՏՐՅԱՆ**	**ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԹՈՒՐ ԴԱՎԹՅԱՆ**